ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 11.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի
04-ը հունիսի 2016թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Կ.Հ.Հովսեփյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ և աշխատակիցներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *Ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ապահովում:*
/զեկ. Մ. Ա. Զաքարյան /

2. *2016-2020թթ. ուս. տարվա աշխատանքային, ուսումնական պլանների քննարկում և հաստատում:*
/զեկ. Մ. Ա. Զաքարյան /

3. *Կրթական ծրագրերի բովանդակային, կառուցվածքային փոփոխություններ որակավորումների ազգային շրջանակներին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:*

/զեկ. Մ. Ա. Զաքարյան /

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Ֆակուլտետի խորհրդի նախագահը ներկաներին ծանոթացրեց 2015-16թթ. ուստարվա ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները. «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության թվով 13 շրջանավարտներից ամփոփիչ ատեստավորմանը մասնակցեցին 13-ը: Ապահովվել է ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության հետևյալ

արդյունքները՝ ըստ համապատասխանության. ,,գերազանց,,-3, ,,լավ,,-7, ,,բավարար,,-3; ,,գերազանց,,-6, ,,լավ,,-4 ,,բավարար,,-3:

Այնուհետև նա հանձնարարեց ամբիոններին իրականացնել 2015-16 ուստարում նախատեսված կուրսային և ավարտական աշխատանքների բաշխումը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց 2015-16թթ. ուս. տարվա II կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները /առաջադիմությունը կցվում է արձանագրության տեքստին/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Ռ. Ռ. Քամալյանը, Հ. Ա. Քամալյանը և ուրիշներ:

Օրակարգի երկրորդ հարցի մասին Մ. Ա. Զաքարյանը զեկուցեց 2016-2020թթ. ուս. տարվա ուսումնական պլանների կազման գործընթացի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցուլյանը և Ռ. Ռ. Քամալյանը: Նրանք ներկայացրին, 2016-2020թթ. ուս. տարվա ուսումնական պլանները, որոնք կազմվել են ,,Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա,, և ,,Քարտեզագրություն և կադաստրային գործ,, մասնագիտությունների համար և ներկայացրին հաստատման:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդին հաստատելու 2016-2020թթ. ուս. տարվա ուսումնական պլանները:

Օրակարգի երրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց, որ ըստ մասնագիտությունների կազմվել են կրթական ծրագրերը, կատարվել են որոշ բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցուլյանը և Ռ. Ռ. Քամալյանը, Ք. Վ. Օթարյանը և ուրիշներ: Նրանք ներկայացրին, որ ավարտվել են կրթական ծրագրերի կազմումը և առաջարկեցին ներկայացնել հաստատման:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդին հաստատելու 2016-2020թթ. ուս.տարվա կրթական ծրագրերը:

ՆԱԽԱԳԱՀ **Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Կ.Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**